

ԼԵԶՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔ Է



հյուրանոցում ացկացվելու էր օլիմպիադան: Այդ պահից մեր դպրոցի խումբը բաժանվեց երկու մասի:

Օլիմպիադան ընթացավ երկու փուլով՝ գրավոր և բանավոր: Գրավոր փուլը բաղկացած էր շարադրությունից և պատմության և մշակույթի թեմաներով գրավոր տեսուից: Մեր աշակերտները Կարախանյան Ինեսսան, Սա-

սիրական երգեր, տարբեր հետաքրքիր խաղեր էին խաղում: Օրերն անցան հագեցած և աննկատ:

Համահայկական հայագիտական 9-րդ օլիմպիադայի արդյունքում Չալոթի 1-ին դպրոցի աշակերտուհի Կարախանյան Ինեսսան արժանացավ III կարգի մրցանակի: Ավետյան Տիգրանը, ջութակով դուրսի և կախարդական մեղեդիներ նվագելով, ստացավ վկայական: Սահանյան Անին, Կարախանյան Էդիտան և Մարգարյան

թյան պարի պետական անսամբլի համերգին:

Երեխաները բարձր տրամադրությամբ, լիցքավորված, մշակութային զարգացած և ոգևորված, գիտելիքների մեծ պաշար հավաքած վերադարձան տուն: Մյուսնիկյանի շրջան: Անմոռանալի օրեր էին Հայաստանում և խորը հետք թողեցին բոլորիս մեջ:

Հոփսիսիմե ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ
Ոսկեհատ ԴՈԼՈՐԱՅԱՆ

ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ԵՎ ՀՐԱՇԱԼԻ ՕՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը 2019թ. օգոստոսի 5-11-ը Հայաստանում կազմակերպել էր Համահայկական հայագիտական 9-րդ օլիմպիադան: 2013 թ-ից երկու տարին մեկ անգամ պետական միջոցներով, արդեն 9-րդ անգամ անցկացվում է Համահայկական հայագիտական օլիմպիադան:

Չալոթի 1-ին դպրոցից ընտրվեց 10 աշակերտ, որոնք հայագիտության անհրաժեշտ իմացություն ունենին: Հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ՝ Ոսկեհատ Դոլորայանի և Հոփսիսիմե Վարդանյանի օգնությամբ, մայիսից հունիս ամիսներին, շաբաթը երեք անգամ, աշակերտները պարապում էին հայոց լեզու, գրականություն, հայոց պատմություն և հայ մշակույթ:

Հունիսի 28-ին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունից եկավ նամակ, որ օլիմպիադային կարող են մասնակցել միայն 5 հոգի: Ընտրությունը անչափ դժվար էր, քանի որ բոլորը նախապես պատրաստ էին ու տոմսերը գնել էին: Այդ ժամանակ մեր դպրոցի տնօրեն՝ հարգարժան Խասպեյան Ալլա Գրիգորյանայի ռոշումով՝ դպրոցական խումբը բաժանվեց երկու մասի՝ օլիմպիադայի մասնակիցներ և էքսկուրսիոն խումբ: Էքսկուրսիոն խումբի ֆինանսավորումը ցուցաբերեց Չալոթի 1-ին դպրոցը և Չալոթի Մուրը Համբարձում էկեղեցին:

Մենք առաջին դպրոցի հայոց լեզվի ուսուցիչներ՝ Հոփսիսիմե Վարդանյանը



Մելինեն ասմունքի մրցույթից ստացան վկայականներ: Այս Համահայկական հայագիտական օլիմպիադայի ժամանակ մենք բարձր պահեցինք և Չալոթի 1-ին դպրոցի պատվը, և Մյուսնիկյանի շրջանի, և ՌԴ շրջանակներում դարձանք լավագույնը:

Մինչդեռ օլիմպիադայի խումբը ցուցաբերում էր իրենց գիտելիքները՝ Սասանյան Միլենան, Դավթյան Անժելիկան և Տոզյան Աշոտը հայոց լեզվի ուսուցիչ Ոսկեհատ Դոլորայանի հետ միասին շրջայցում էին Հայաստանի տեսարժան վայրերը և ակամայից ծանոթանում էին հայոց պատմության և մշակույթի գանձերին:

Օլիմպիադայի 7 օրերը մեզ համար դարձան անմոռանալի: Մա մեծ հնարավորություն էր մեզ համար ավելի խորը ճանաչելու հայ մշակույթը, գրականությունն ու պատմությունը: Այդ օրերի ընթացքում մենք ոչ թե մրցակիցներ էինք, այլ արդեն մտերիմ դարձած ընկերներ: Օրերն անցան մեկ ակնթարթի պես: Երբեք չենք մոռանա մեր երեկոները, արկածային և ուրախ օրերը: Մեր մեծ ձեռքբերումներից էին նաև մեր ընկերները աշխարհի տարբեր ծայրերից: Բառերն անգոր են նկարագրելու մեր անցկացրած հիասքանչ օրերը Աղվերանում:

Ինեսսա և Էդիտա ՎԱՐՄԱՆՅԱՆ

Սհա և ավարտվեց Համահայկական հայագիտական 9-րդ օլիմպիադան:



հակյան Անին, Կարախանյան Էդիտան, Մարգարյան Մելինեն, Ավետյան Տիգրանը, գրավոր փուլում բարձր միավորներ հավաքելով, անցան օլիմպիադայի 2-րդ բանավոր փուլ: Մրցութային օրերը անցնում էին շատ լավ: Բանավոր փուլում շատ խիստ էին ստուգում հայոց լեզվի և գրականության հարցերը: Սակայն մեր աշակերտները շատ բարձր մակարդակ և բազմակողմանի գիտելիքներ էին ցուցաբերում:

Օլիմպիադայի օրերին անցկացվեցին նաև երգի, պարի և ասմունքի մրցույթներ: Կազմակերպվեցին մշակութային և ուսուցողական տարբեր միջոցառումներ:



և Ոսկեհատ Դոլորայանը, աշակերտների հետ հասանք Հայաստան: Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում տեղի ունեցավ Համահայկական հայագիտական 9-րդ օլիմպիադայի բացումը: Այս տարի օլիմպիադային մասնակցում էին 80 աշակերտ 6 երկրից: Ռուսաստանի Դաշնության Ռոստով, Մոսկվա, Կրասնոդար, Տյումեն քաղաքներից, Կրասնոսնից, Իրանի Սպահան և Թեհրան քաղաքներից, Քուվեյթից, նաև Հայաստանից և Արցախից: Կազմակերպիչները ողջունեցին բոլոր մասնակիցներին և ուսուցիչներին՝ մաղթելով հաջողություն: Այնուհետև օլիմպիադայի մասնակիցները մեկնեցին Աղվերան, որտեղ «Աղվերան»

• Կոմիտասի 150-ամյակի նվիրված գրույթ և երգի ուսուցում
• Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված ասմունքի երեկո
• Էրեբունի թանգարանի տնօրեն՝ Միքայել Բաղայանը դասախոսություն կարդաց Հայաստանի տարածքում պեղումների վերաբերյալ
• Այցելեցինք Սևանա լիճ, Սևանավանք, Սևանի բուսաբանական այգի
Օլիմպիադան նաև հնարավորություն տվեց աշխարհի տարբեր երկրներից եկած հայ երիտասարդների ծանոթանալու և կապեր հաստատելու միմյանց հետ: Անմոռանալի երեկոներ էինք անցկացնում Աղվերանում: Երգում էինք հայրենա-

Հրաշալի 7 օրերի ընթացքում մեր էքսկուրսիոն խումբը այցելեց Հայոց պարտեզին նվիրված հուշարձանը, Աշտարակի Օհանավանք և Մաղմուսավանք եկեղեցիները, Գառնիի տաճարը, Գեղարդավանքը, Գոշավանքը, Սևանա լիճը և Սևանավանքը, Հաղարծնի վանքը, Կոնստանդնուպոլիսի Սուրբ Վիրապը: Եղանք նաև Հովհաննես Թումանյանի, Մարտիրոս Մարյանի, Պարույր Սևակի տուն թանգարաններում: Հետո գրոսնելով՝ վայելեցինք վարդագույն Երևանի հիշարժան վայրերը՝ հրապարակը, օպերան, կասկադը: Մեզ բացառիկ հնարավորություն ընձեռնվեց թոնրի մեջ լավաշ թխել: Մի շաբաթվա ընթացքում այցելեցինք հնագույն Էրեբունի արձոցն ու թանգարանը, Հայաստանի պատմության թանգարանը, Ազգային պետական պատկերասրահը, Մեծ Եղեռնին նվիրված Օիդեոնակաբերդ ու Հայոց եղեռնի թանգարանը:

Արարատ լեռան մոտ, Եղիշե Չարենցի կամարի տակ և Պարույր Սևակի շիրիմին մեր դպրոցի աշակերտները արտասանեցին նշանավոր հայ գրողների բանաստեղծությունները:

Բոլոր էքսկուրսիաներին մեզ ուղեկցում էին Երևանի պետական համալսարանի դասախոսներ Միսոն Պետրոսյանը և Համիկ Բայանը: Նրանք պատմեցին բոլոր տեսարժան վայրերի մասին, հայոց պատմությունից ու հնագույն գրականությունից: Էքսկուրսիաների ժամանակ շատ հետաքրքիր տեղեկություններ ստացանք Հայաստանի բնության և աշխարհագրության մասին:

Մեր ուղևորության վերջին երեկոն բոլոր միասին անցկացրեցինք Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում՝ Հայաստանի Հանրապետու-

Մեկ շաբաթը այնքան քիչ էր, բայց լի շատ հետաքրքիր և անմոռաց օրերով: Երբեք չեմ մոռանա, թե ինչպես ամբողջ օրը և նաև գիշերներով պատրաստվում էինք օլիմպիադայի հաջորդ փուլին: Այդ փոքր ժամանակահատվածում մենք ոչ միայն անցել ենք այդ օլիմպիադան, այլ նաև ծանոթացել մեր հայրերի հետ, որոնք եկել էին տարբեր երկրներից: Ինձ համար նրանք դարձան շատ հարգատև և մտերիմ մարդիկ: Նման բարի, անկեղծ և անեմակարևորը հայրենասեր մարդկանց ես երբեք չեմ հանդիպել: Ամեն մի օրը նրանց հետ լի էր հետաքրքիր և զվարճալի դեպքերով:

Մենք մի շաբաթ ապրել ենք մի շատ համախոս և գեղեցիկ տեղ Աղվերանում: Երբեք չեմ մոռանա, թե ինչպես մենք ամբողջ հյուրանոցով մեկ պարում ու երգում էինք մեր հայկական երգերը, խաղում էինք տարբեր խաղեր: Եվ ինձ համար ամենահուզիչը դա էր...

Անի ՄԱՀԱԿՅԱՆ

Այս ամառ ես հնարավորություն ունեցա մասնակցել համահայկական հայագիտական 9-րդ օլիմպիադային: Մենք շատ երկար պատրաստվում էինք: Հին անալի և անմոռանալի օրեր էին Աղվերանում: Ծանոթացանք հայ երեխաների հետ աշխարհի տարբեր ծայրերից: Անմոռաց օրեր էին, հիշում եմ օգոստոսի 7-ը, երբ մենք մեր թիմով խաղ էինք խաղում, հետո սկսեցինք երգել, ջութակ նվագել: Մեր շուրջը հավաքվեցին բազում աշակերտներ և ուսուցիչներ: Երգում, պարում և ուրախանում էինք: Ես կանքում չեմ մոռանա այդ գեղեցիկ օրերն Աղվերանում:

Տիգրան ԱՎԵՏՅԱՆ